

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐԻ ԶԳՏՈՒՄՆԵՐՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

(Շարունակութիւն).

Ի թուին Հայոց ՈՒԴ. եկն Գրիգոր եպիսկոպոս ի Հայրապետէն
Հռոմայ Լուսիոյ առ կաթողիկոսն մեր տէր Գրիգորիոս՝ որ էր
ի սմանէ առաքեալ, և երբ զսլաւասխանի նամակի տեսառնս մե-
րոյ և զգիրս կարգաց եկեղեցւոյ Հռոմայեցի գրով, և եգիտ
զտէրն մեր ի քաղաքն Տարսոն յամենան Հոկտեմբեր, և ըն-
կալեալ կաթողիկոսին սրբոյ զպատուական պալիօնն և զխոյրն
ի լրումն պատուոյ իւրոյ գոհացաւ զԱստուծոյ, և ետ զնամակ
Հայրապետին և զգիրսն կարգաց եկեղեցւոյ՝ յիմ նուաստու-
թիւնս թարգմանել, զոր յեղաշրջեցի ի Հայ բարբառ, միայն ե-
րիւրեալ զբանսն քերդողական արհեստիւ՝ առանց յաւելուածոյ
և թերութեան: Իսկ յետ այսր ի թուին ՈՒԶ. ըստ մեղաց մերոց
առաւ ս. քաղաքն Երուսաղէմ յիսմայելացւոց թագաւորէն Յով-
սեփայ, և որ ի նմանէ եկեղեցւոյ սպասաւորքն և զօրքն ցիր և
ցան եղէն յայսկոյս ծովուն և յայն. իսկ Հայրապետն Հռոմայ
շարժեաց զթագաւորս և զիշխանս և զզօրս և զքաղաքացիս
զանազան աղգաց գալ յայսկոյս ի փրկութիւն ս. տեղեացն, և
ամենեքեան բարձին յօժարութեամբ զխաչն Քրիստոսի և եկին
մեծաւ աշխատութեամբ: Ընդ որս եկն և թագաւորն Ալամանաց
Փիլիտրիք որ էր ինքնակալ Հռոմայ և մեծ քան զամենայն թա-
գաւորս, և սա ոչ ծովով՝ այլ ընդ ցամաքն արար ճոնապարհ
անթիւ զօրօք. եմուտ յԱնկուս, և եկեալ ձմերեաց ի Մակեդոն-
եայ ի Փիլիպուպոլիս, ի տօն պասեքին անց ընդ ծովն Աւետեաց.

և ծանր տարժանմամբ հերձեալ զբանակս անթիւ խորանարանակ թուրքիմանացն, էջ զօրօքն հուպ քաղաքին Սելեֆիկիու Սօրացուոց: Զոր լուեալ կաթուղիկոսն մեր Գրիգորիոս, և իշխողն Վեոն ընդ որոյ տէրութեամբ էր Սելեֆիկիայ, փութան մեօք հանդերձ ընդ առաջ նորա մեծաւ ուրախութեամբ իբրեւ փրկի այս աշխարհացս: Այլ մեղաց մեր ծանրութիւն կարճեաց զընթացս արքային, զի յանց գետոյն Սելեկիոյ ախորժեաց լուանալ և ծերութեամբն ոչ զօրեաց ընդգէմ կալ յորձանացն հեղձաւ. իսկ մեր արտմութեամբ պատահեալ եպիսկոպոսացն, որք գային զկնի և որդւոյ նորին և զօրացն՝ դարձաք ի Տարսոն, և զի խոստումն էր ինքնակալին ոսկի կնքեալ գրով Հայոց թագաւոր դնել, պահանջեաց կաթուղիկոսն սուրբ ի նոցանէ զլրումն խոստմանն, և ինձ հրաման ետ զայն թարգմանել. զոր կատարեցի յօրինակէ միոյ եպիսկոպոսաց նորին որ առիս իջեանէր Մուստեր քաղաքի, որ ունէր իւր դաս ձիավարժից զկնի ու հեծեալ, և յորժամ թարգմանեցի խորհեցան և ոչ կարացին յանձն առնուլ զգործն յորժամ ինքնակալն բարձաւ ի միջոյ. այլ իջին յԱնտիոք և անտի ի Պաղեստին: Իսկ ես զթարգմանեալ օրհնութիւն թագաւորիս ոչ կամեցայ աղաւաղել՝ եզի ընդ նախաթարգմանեալ կարգսգ վերստին յարմարմամբ, և աղաչեմ զիմաստուն ընթերցողսդ ոչ աւելորդ համարել զմեր ի սոյն վաստակ որ ծարաւի էաք և Հռոմայ եկեղեցոյն կարգացն ընդ այլ գիտութեանց՝ և սովաւ զովացաք՝ և թողաք զկնի եկեղեցդ ի փառս Քրիստոսի որ է օրհնեալ:

Մատենադարանիս այն գրչագիրն, որից հանել ենք այս վերջին կտորները (№ 530. Ա. բաժին) ունի և մի յուշագրութիւն՝ որ գրուած է նոցա վերջում վերագրեալ փսքրիկ նամակից զկնի: Յուշագրութիւնից առաջ կան զանազան թղթեր, իսկ սկզբում՝ ընդհանրականի մէջ հրատարակուածներն են, բացի Շնորհալու մասնաւոր նամակները: Հարկաւ չի կարելի ասել թէ ի՞նչ է բովանդակել այն գիրքն, որի վրայ այդ գրուել է, մասնաւոր որ ընդհանրականից յետոյ՝ Վամբրոնեցու առ Վեոն թղթից զկնի գրուած է և այս. « զարժանապատիւ հայրապետն

Հայոց զաւէր Գրիգորիոս ստացող գրոցս ազաչեմ յիշել ի Տէր ծնողոք քերքք և եղբարքք և բնաւին զարմօք՝ որպէս զի ողորմեսցի նոցա Քրիստոս: Ընդ նոռին և մեղաւոր գրչիս Վարդանայ և իմոյ ծնողացն և որոց ամէն ասենա:

Վերոյիշեալ յուշագրութիւնն է այս.

«Տէր Գրիգորիոս ծառայ Աստուծոյ և ողորմութեամբ նորին կաթողիկոս Հայոց՝ ընծայեցի զգիրքս Եսայի վարդապետին ի ձեռն մեր հաւատարիմ լիկատին տէր Կոստանդեայ արքեպիսկոպոսին Կեսարու, առաքեալ յարեւելս ի թվիս 287. (1305): Ուրեմն գիրքն արեւելք ուղարկողն է Գրիգոր Անաւարդեցին որ ըստ այդմ մեռել է 1306 ին: Բայց այդ մասին յետոյ:

Յառաջ բերուած բոլոր պատահական թէ գիտաւորական բանակցութեանց կամ թղթագրութեան կամ խօսքի փոխանակութեան հիմունքը մէկ որոշ քաղաքականութիւն էր, որ ինչպէս ասացինք, բացորոշ արտայայտուած ենք գտնում Գրիգոր Տղայի թղթի մէջ:

Ահաւասիկ և այդ թանգագին թույլթը:

Հարցումն խրատուց, զոր խնդրեալ է կաթողիկոսն Հայոց Գրիգոր Տղայն կոչեցեալ ի մեծապատիւ վարդապետէն Գրիգորէ որդոյ Տուտեայ. վասն ամբաստանութեան կաթողիկոսին Աղուանից տեառն Ստեփաննոսի: Զոր գրեալ էին առ նա եպիսկոպոսքն Աղուանից: Եւ վասն Հոռոմոց՝ որ յափշտակեցին զեկեղեցիան Հայոց, որ յարեւմուտս էին յաշխարհն Հոռոմոց:

Որք կապակցութիւն առ միմեանս դաւանեալ բնաւորին սիրովն սուրբ որ առ Աստուած բարոյականին յանեղծն և յանհակամիտողն ամենայն լրութեամբ, մանաւանդ առ եղբարս և թէ աւելի առ հայրս հոգեւորս և դարմանիչս բաժիւ, զոր ոչ ժամանակ և ոչ իր, ոչ խորութիւն և ոչ բարձրութիւն, ոչ նեղութիւն պարտի բերել կարողութեամբ առ ի յայնպիսի ճշմարիտ սիրոյ խափանումն, որովք և մեք այսպիսի բարւոք մտածութեամբ և անդրգուելի յուսով ողջունելք զքեզ ձերունի հայր Գրիգորիէ, ճօխացեալ բանականաւ և արդիւնականաւ գործառնութեամբ ըստ իրունականին անձին յաջորդութեան, ուր և

գաղարեալ Հանգլի անորակն և անքանակն, և անզուգականն անուն Աստուած, ընդ որս և Հարցանեմք սակս մաքրագունիդ անձին կենդանութեան և խաղաղութեան կրկին տեսութեամբ, վասնորոյ և աղօթեմք Տեառն և աստուածընկալ սրբոցս զախորժականն լսել մեզ, լուր որ զիսն ձեր որպէս զի խաղաղութեամբ և Հանդարտութեամբ ունիցիք զքաղաքաւարութիւն ձեր ամենայն աստուածաշնորհութեամբ և սրբութեամբ ըստ նախուստն գնացից, Եւ զմերս եթէ կամիցիք ախորժաբար լսել, որպէս և բերէ բնութեամբ գթած Հայր առ սիրեցեալ որդի և Հարցանէք իմանալ շնորհօք և գթութեամբ Տեառն մերոյ և Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, և որք առ ի նմանէ պարգևեցան մեզ քրիստոսակիր և աստուածընկալ սրբոցս, ունիմք այժմուս զկենդանութիւն ըստ մարմնոյ առոյգ և զուարթ, և քաղաքաւարիմք յամենայն տեսակս, և առ ամենայն որք ի վեր քան զարժանն, և առաւել քան զորս իմացաք խնդրել ի Տեառնէ մեծարեալ և պատուեալ յամենեցունց ներքոյ և արտաքոյ, առ սիրելիս՝ և առ թշնամիս, գերալրապէս ունելով զփառաւորութիւն երկնահանգէս աթոռոյս և սուրբ գիտանողիս: Եւ այն ամենայն ի մաքրամատոյց և յաստուածահաճոյ աղօթից ձերոյ, վասն զի կանգնեաց զսա և ամրացոյց Տէր առաւել քան ըզպատուեալ լեառն Արիւն և քան զնախամեծար ամրոյն Թաւաղովթ, ի սաստիկ դառն և յանձուկ և յանբարի ժամանակիս, յորում Հեղեղ մեղաց մերոց զօրացեալ երարձ յերկրէ զամենայն որ ունիցի յինքեան Հոգեւոր շունչ կենդանութեան, և արար սմա լինել, զի ամենայն ոք որ Հարցի ընդ Վիմիս ընդ այսմիկ՝ փշրեսցի, և յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա¹: Արովք և վասնորոյ յամենայն ժամ հրաշագործէ Տէր հրաշաւորս և զարմանալիս ի փառս Աստուծոյ:

Այլ ծանիր, ծերունի Հայր, վասն զի սուրբութիւն է վերնոյն փայեթոնի և լուսատուի, զի առ որովք հասանէ լուսոյն բնութեամբ՝ լուսաւորէ, և գոլորշոյն բնութեամբ տապացուցանէ, և

անուցանէ՛ զբոյսս, զտունիս և զկենդանիս և տայ զառողութիւն և զանողութիւն. մանաւանդ թէ և զկենդանութիւն իւրաքանչիւր ումիք զիւրն յառաջեցուցանել, և տանել զբնութեան կիրս, այսպէս արժան է իմանալ և զքոյդ բանի լուսաւորութիւն, և կենդանութիւն պահել շնորհօքն Աստուծոյ. առորս հասանէ՛ յարաժամ առանց ծմայակայութեան մնայ, զի ճշմարիտ կենդանութեան և սուղջ կարացուք հասանել անորէպէ՛ ծանիցէ և զայս դարձեալ իտհականութիւնդ ձեր, որպէս զգօն և արթուն անդամ լրման եկեղեցոյս Հայոց, մանաւանդ թէ ակն տեսանոյ զլիսոյս զի որպէս կարգեցաք և եղաք հրամանաւ և գործակցութեամբ Տեառն և Հոգւոյն սրբոյ, յայս պարահայեաց և երկնահանգէտ աթուոյ դիտաւորութիւն և գլխաւորութիւն. գիտելի է զի պահանջի ի մէնջ աստուածային օրինօքն հոգալ և քննել զբովանդակ Հայոց լրումն՝ իբրեւ զանդամոց և զընդձեռամբ անկելոց՝ հոգալ և զտունն Աղուանից, և զվերապետուն Նորա իբրեւ զազգականակից և զաշտիճանակից և զեղբայր, ընդ բարւոք լուրն՝ որ ի նոցանէ ուրախանալ, և ընդ դժուարինս տրտմել և հոգալ. և ի գլորումն և ի վտանգաւորութիւն՝ օգնել և կանգնել, որպէս կարգեցին նախնիքն մեր և հարքն սուրբք:

Եւ արդ գիտեա՛ ծերունի հայր, զի յառաջ աւուրք լսէաք գլխոյդ տանդ Աղուանից բազում բանս ամբաստանութեան և յրոշմութեան և յանկարգութեան գործ որպէս և յառաջնումն ամին՝ մենչդեռ ևս նորրնծայ էաք ի սրբոյ Աթոռոյս դիտաւորութիւն, և առաքիցաք զնուիրակսն մեր զտէր Թորոս և զպարոն Վասիլն յաշխարհդ արեւելից և ի գաւառ Նաանայ և ի Գանձակ և առ ինքն, և թէ որպէս պատահեցաւ նորայն գործ և իր առմերովքն, այն ոչ է առ ի ձէնջ ծածկեալ, զի յայնցանէ առ ձեզ չոգան, թուի թէ և պատմեցին բովանդակապէս ձեզ զայն, և ապա ի գալն Սարգսի որ և խուզի Յերթիկուղէն բազում ամբաստանութեան գրովք, և ի գաւառացեացն և յեպիսկոպոսացն, և ի վարդապետաց, և ի կենդանի մարդոց, որպէս զտէր Բարսեղ և զտէր Սահակ, և զտէր Գորգ, և մեծամեծ ջանիւ զամենե-

սեան ի բաց նահանջեցաք, և վերստին յաթոռ և յիշխանութիւն հաստատեցաք: Եւ անդիշ ևս այսր այլ և բազում բանիւք զգուշականօք խրատեցաք գրովք, և ոչինչ օգտեցաք: Գրեցին ի մեզ և այլ բազում անգամ ազատք խաչենոյ, և կենդանի մարդիկ ի գաւառացեացն. և Փիլիպպոս միայնակեացն ի Հաղբատայ. և այլք բազումք. և մեք ոչ կամեցաք զօշաքաղ երևել. և կամ զօտարատեսուչ մինչև յայսմ ամս զի տեսաք զյոքունս ի նորայոց կենդանի, և իմաստուն մարդիկ, և լուաք ի նոցանէ բանս անճահս և անպատշաճ առ նա, որ անյուսութեան և անհաւատութեան կարծիս ետ մեզ եթէ գոյ ի նմա ծածկեալ, և այնու ջանայ աղաւաղել, և խափանումն առնել երկնահաստատ աթոռոյն սրբոյ, զոր մեծաւ ջանիւ և աշխատութեամբ հաստատեցին առաքեալքն սուրբք և ամրացոյց և պարփակեաց ամենայն ամբութեամբս. Լուսաւորիչն մեր և հետեւողն նորա:

Եւ զի լուաք եթէ զսպաս սրբոյ աթոռոյն զսուրբ նշան էր և զգրեանք, և զայլ անօթք եկեղեցւոյ, յանալէտս վատնէ և յրուէ անխնայաբար իբրև զթշնամի, «զի մի այն ոք որ զինի իմ գայցեն, ասէ, գտցեն ինչ», և զայն առ նախանձու չարութեան: Դարձեալ ասացին եթէ զեպիսկոպոսացն զգործ և զձեռնարկութիւն սրակասեցոյց և եբարձ ի գաւառացի և զ'Հ. աթոռն ի մի հաստատեաց, կամ յերկուս, և զքահանայս գաւառացն ինքն ձեռնադրէ, և ծանրանայ կաշառօքն. յամենայն յանձնէ Լ. դաւիտոյ, և Խ. և ի կրօնաւորացն Ժ. և ԺԲ: Մանաւանդ թէ և զխաչն օծութեան և զմեռոնն սրբալոյս, որովք լուսաւորին և կնքին հաւատացելոցն անձինք շնորհօք Հոգւոյն Սրբոյ՝ բնաւին եբարձ ընդունողացն զայն և պակասեցոյց ի գաւառացն: Եւ յորժամ զայս ամենայն լուաք և հաստատեցաք ի հաւատարմագունիցն արանց՝ վշտացաք և լցաք տրտմութեամբ. թէ զիմօրդ այսպիսի գժնդակ ցաւօք մարտնչի սկզբնաչարն ընդ ազգս Հայոց. զի այսօրիկ են և մեղք որ մահու չափ են, վասն զի ի հաւատոյ և յուսոյ պակասեցուցանեն, զորս և ոչ կամեցաք անփոյթ առնել օրինական գատմամբ, այլ յանձն առաք գրել առ նա՝ դարձեալ եղբայրական սիրով ի զգուշութիւն և ի զարթուցումն. այլ զի

գիտեմք և հաստատեալ եմք եթէ որք կամաւ ննջեցին, ոչ երբէք զարթեան, գիտեմք զի և դա ոչ զարթնուցու որպէս և ոչ երբէք զարթեաւ. գրեցաք և առ ձեզ որպէս առ հայր, զի և դուք ջան զանձամբ առեալ հոգասջիբ զայս աղէտ տարակուսանաց, որպէս զիմաստուն տնտես, և խորհեսցիս և խորհրդակցեսցիս մեզ թէ զի՞նչ պարտ իցէ առնել առ այս գործ, զի բարձցի ի միջոյ չարն, և հաստատեսցի դարձեալ ճշմարտութիւն, և բժշկեսցի հիւանդութիւն, և եկեսցէ առողջութիւն, և թէ նա զմեռելութեան յանձն էառ զգործ և զճանապարհ, մնացէ յայն և բարձցի ի միջոյ, և լցցէ զտեղի նորա որ որ ի կենդանութեան մասն իցէ. և զոր Տէր հրամայեսցէ:

Լուաք թէ գոյ առ ոտս ձեր որ ի նոցանէ, և ի ձերոց իսկ ազգայնոց, երիտասարդ զգօն և պիտանի, զոր և տեղիք սննդեան նորա հաւատարմացուցին զբարւոք վկայութիւն նորա: Արդ՝ եթէ կամք լինիցի ձեր այն և մեք օգնական և օժանդակ առ այն յամենայն տեսակս բարեաց մեծաւ ջանիւ, որ պատշաճի ձեզ և լսեմք. ապա թէ ոչ այդ իցէ ձեզ ախորժելի, և զայլ որ գիտէք բարի և արժանաւոր և կարող այդպիսի գործոյ, և մեծագոյն աշտիճանի, և զայն ևս ծանուցէք և հոգասցէք անյապաղ. և մեք առ այն օգնական և ջատագով որպէս և պատշաճէ Տէր, ապա և զայս գիտասջիբ հայր պատուական՝ զի և ի ձէնջ առաւել ևս պահանջի այսպիսի գործառնութեանս խնամ տանել վասն ցեղականութեան և գաւառակցութեան ըստ Պօղոսի¹⁾, որ խնդրէ նզով լինել վասն էղբարց և ազգականաց իւրոց, և Տէր Զիսուս յաջողեսցէ ի բարին զարժանն և զօգուտն խորհել և առնել:

Դարձեալ ծանիր և զայս իմաստուն տնտես և սպասաւոր բանի, զի թագաւորն Յունաց յետ բազում հարուածոց և գանից, որով եհար զազգս Հայոց, և զսեփական ժողովուրդս մեր՝ որ ընդ տերութեամբ նորա էին զրկանօք և զզուանօք, և բանդիւք և կապանօք և հալածանօք ի հայրենի տանց և ըս-

1) Հռ. Թ. 3.

տալանդ ոց, և զեպիսկոպոսունս և զերիցունս ի մետաղս առաքեաց: Դարձեալ շարժիլ կամի ի չարէն, և խնդրէ զխաղաղութիւն, որպէս և ի գրեթցդ նոր տեղեկանայք. մեք որպէս և ընկալաք ի ձէնջ գրով՝ հրաժարեցաք և ի բաց Լքաք զամենայն խնդիր որ ի նոցանէ. և վասն այնորիկ սաստկացաւ մարտ պատերազմի նոցա ի վերայ մերոցն, և յինքեանս գրաւեցին զաթոռս եպիսկոպոսացն և կնքեցին զեպիսկոպոսունս ի մերոցն և ի կրօնաւորացն՝ որք հաւանեցան՝ և դարձուցին յինքեանս զեկեղեցիքն և զվանորայն. և նոքա յարաժամ բողոքեն օգնել նոցա:

Արդ աղաչեմք զի և առ այս աժանդակ լիջիք մեզ բարւոր խրատու, որպէս հայր և օժանդակ, վասն զի երկնչիմք մեծաւ երկիւղիւ ի տէրունական բանին որ ասէ. եթէ «հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարացն և վարձկանն տեսանէ զգայն և փախչի»¹: Եւ գիտեմք զի ի նեղութիւնս և ի հալածանս կոչեցաք, և ոչ ի հանգիստ և ի փառս միայն, արդ աղաչեմք դարձեալ զի առ այս բան՝ զոր ինչ պարտ վարկանիմք, յայն յորդորեսիք զմեզ, և զայլ ամենայն բան տեղեկանայ խոհականութիւնդ ձեր ի հաւատարիմ աշակերտէդ. մերմէ ի տէր Ստեփաննոսէ, և յաստուածասէր իշխանէդ Ապաղմսեհէ. և դուք մնացէք ողջ Տերամք և Աստուծով:

Այս գեղեցիկ նամակը ցոյց է տալիս արդէն կատարեալ պարզութեամբ այն անեկանելի վիճակն, որում գտնուած էին Հայերը: Համոզուած լինելով՝ որ խղճի աղատութիւնը բնաւ չպէտք է բռնադատուի, պահում էին իւրեանց հաւատքն՝ իբրեւ համոզմունք՝ անսփոփոխ մանաւանդ որ ով այդպիսի ներքին համոզմունք չունի՝ իջնում է անասնական աստիճանի, պահում էին, ասում եմ, այդ համոզմունքն ամենայն զոհաբերութեամբ և մի և նոյն ժամանակ օտարին չէին դպչում կամ անպատուում. սակայն ինչ անէին՝ երբ առաւելագոյն ոյժ ունեցողը նոյն իսկ նիւթական բռնութիւն էր գործ դնում ուրիշի համոզմունքը խախտելու համար: Ահա սյգտեղ Հայոց կաթողիկոսը ձգտում էր սէր և

բարեկամութիւն հաստատել, թէև չգիտէին քարոզել հասկաց-
նել՝ որ համոզմունքը միանգամ փոխուին՝ ուրիշին ևս անպէտք
է լիապէս:

Բայց այս նամակը մէկ կողմից ևս ուշադրութեան արժանի է.
Գրիգոր Տղան՝ ամենայն Հայոց բարձրագիտակ կաթողիկոսն՝ ոչ
թէ հայրապետական իշխանութեամբ է գործում, այլ ընտանե-
կան խորհրդակցութեամբ. իւրաքանչիւր փոքր ի շատէ բանգէտ
եկեղեցականի խօսքին նա մեծ նշանակութիւն է տալիս, որպէս
տեսնում ենք նորա միւս թղթից առ արևելեան վարդապետ-
ներն և թէ հէնց Շնորհալու հրաւիրագրից: Նա խորհրդակցում է
ամենքի հետ, նա խոնարհում է իւր բարձրութիւնից մինչև ան-
գամ մի վանական ծերունու առաջ. նա չէ խօսում իբրև կա-
թողիկոս, այլ իբրև ընկեր, եղբայր և պաշտօնակից, վասն զի
նա իւր արժանիքն ու վսեմութիւնն ոչ թէ իշխանական սաստի
և իրաւունքի մէջ է տեսնում, այլ բարոյական պատուի և պար-
տիքի մէջ. նա իւր մեծութիւնն ու փառքն ոչ թէ բռնութեան
և սարսափահարութեան վրայ է հիմնում, այլ հոգևոր սրբու-
թեան և ճշմարիտ հեղութեան անշարժ հաստատութեան վրայ:
Որքան նա ներքին հարստութիւն և արժանիք, հասկացողութիւն
և արիութիւն ունի, այնքան խոնարհ է և բարեմիտ. վասն զի
այդ է միայն մշտական, իսկ իշխանութիւնն ու բռնութիւնը մի
ժամանակ չէ ունեցել և կարէ այսօր կամ վաղը կորցնել և ա-
պա անարգուել ամենից:

Գրիգոր Տղան լաւ է հասկանում որ իւր փառքը պարտիքի
կատարելուն մէջ է և ոչ թէ իշխանութեան, ուստի և ասում է.
«վասն զի երկնչիմք մեծաւ երկիրդիւ ի տէրունական բանէն՝ որ
ասէ. թէ հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարացն. և
վարձկանն տեսանէ զգայլն և փախչի»: Քանի՜ բազմակողմանի
խօսքեր են՝ «վարձկանն տեսանէ զգայլն և փախչի»: Այս այն սկզբ-
բունքն է՝ որ դեռ սուրբն Սահակ՝ այդ աննման անձն՝ ասում
էր՝ «ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխար, և ոչ
պատել զբեկեալ կամ զհիւանդացեալ . . . » (Խորենացի III, ԿԳ):
Գրիգոր Տղան սոսկում է հակառակն անել, զի քաջ գիտէ այդ

բարոյական հիմունքն՝ որի վրայ հաստատուած է իւր «երկնահանգէտ աթոռը»՝ «զի ամենայն ոք որ հարցի ընդ վիմիս ընդ այսմիկ՝ փշրեսցի, և յորոց վերայ անկցի հոսեսցէ զնա»։ Այսոքիկ են նորա գաղափարները, վասնորոյ և զրօշմումէ իւր կեանքի խնդիրը՝ շեշտելով. «Գիտեմք, զի ի նեղութիւնս և ի հալածանս կոչեցաք, և ոչ ի հանգիստ և ի փառս միայն»։ և հէնց այդ է պատճառն, որ նա չէ քաշուած խորհուրդ խնդրելուց, քանի որ իւր նպատակն է՝ աթոռը բարձրացնել և ոչ թէ միայն պատիւ վայելել ի չար յիշատակ։

Գրիգոր Տղայի խոնարհութիւնն ու հեղութիւնը երևում է առաւել ևս նորա երկրորդ թղթից առ Գրիգոր Տաղէորդին. բերենք և այն.

Գիր ողջունի և հարցումն խրատու տեսնն Գրիգորի Հայոց կաթողիկոսի՝ Տղայն կոչեցելոյ՝ առ մեծապատիւ վարդապետն Գրիգոր՝ որդի Տուտեայ. խնդրելով ի նմանէ բան պատասխանոյ թխտին Հոռոմոց, որ էր գրեալ առ նա՝ ցուցանել նոցա գրով զկարգս եկեղեցական՝ զխոստովանութիւն հաւատոց մերոց։

Որք կարօտք են կերակրոց, փափագելի է նոցա հայ, և որք ծարաւիք անձամբք՝ զովարար է նոցա ջուր, և ուրախարար գինի, և որք թափուր են ի լուսոյ՝ տենչալի է նոցա տեսութիւն լուսոյ, և ուրախութիւն սրտից։ Այսպէս և մեզ հանդիպի հասանել գրոյ ձեռին ձերով քրիստոսակիր սուրբ և արգիւնական բանաւոր և մատակարար բանի բերելով մեզ ինքեամբ ըստ մաքրագունի հոգւոյդ խաղաղութեան և զմարմնոյդ սրբոյ կենդանութիւն, և առողջութիւն, զոր խնդրեսցէ տէր ողորմութեամբ երկարաձիգ ամօք ի պէտս հաւատարիմ տնտեսութեան առ ի յինքենէ արեամբ շինեալ տանն եօթն սեամբք¹ ամրացելոյն, և ձմարիտ և անարատ անձինն շաղկապելոյ և յօգելոյ ի կենսատու գլուխն, զի հաստատուն մնացէ տունն, և անքակտելի մարմինն մեծաջան և քրտնալստտակ աշխատութեան ձերով, որպէս առաջնոցն առէք օրինակ, ոչ միայն առնել՝ այլ և ուսու-

1) Առաջ. Թ. 1.

ցանել և ջատագով լինել աղօթիւք բնաւից՝ որք պէտն ունին, որովք և մեք անօրինեմք, յայժմուս ըստ կամաց պահողին և մաղթողիդ, և ներկային ական ունիմք. այլ զձերդ ծանեայք հոգաբարձութիւն սիրոյ, և խնամք խրատուց ի գրելոցս և յեկեւոյս, և շնորհք ունիմք իբրեւ ծնողի և հօր ոչ բաւականացեալ այժմովքս, այլ կարօտեալ ապագային, զի եթէ խանգարեալ իցեն զգայարանք՝ անգործ մնասցէ գլուխ, և ի պակասել խորհրդակից բարեկամաց՝ անգոր լինի թագաւոր. այլ զի զմերս ծանեայք յօժարութիւն կամաց և ցանկութիւն սրտի՝ ի տես ձեր ցանկալի, և անտես արարիք, տրամութիւն էաժ ի սիրտս մեր, և բազում և յոգնակի խորհրդոց և առաջարկութեանց բարեաց խափանումն տրար, և որ անկասկածելի հաստատելութեամբ յեցեալ էաք ի սէր ձեր՝ սրտիւ և յարտայայտեալ բանիւ առ մեծաւորս և առ հեռաւորս, սրտիւք և գաւառօք, այժմ՝ յոտաց կացար և անյուսացար, վասն զի ինձ այլ ո՞րք քան թէ տունդ յարեւելից հանդերձ բնակչօք իւր, այլ թէ մինչև ցայս վայր էր, զայս անգիտանայաք յանձինս, զի խորհուրդք մեր որ առ ձեզ ոչ զհեշտան և զքաղցրագոյնսն, այլ զազնիւն պահանջէին, և յայն սակս ստացար զձեզ բարեկամս, թէև ոչ արդեամբք ընչից, սակայն Աստուծով, զի լինիցիք մեզ աչս ի տեսանել, և ահանջս առ ի լսել, և ձեռս առ ի շօշափումն, որով կարող լինէաք իմաստաբար նախախնամել և հոգալ զտնտեսութիւն զառ ի մեզ զհաւատացեալ տանս Աստուծոյ, ի բազում զգայարանաց ամբացեալք, այլ զի ծանեաք ժամանակաւ փորձել զբարեկամս՝ ոչ անգիտանամք զայս, որպէս ոսկի հրով փորձի, նոյնպէս և բարեկամք հաղորդութեամբք վշտաց և երկանց, յոր անկոչ ուսար գնալ, և մի պատճառել զանկարութիւն, և զխոշորութիւն ճանապարհի, որ է տարացւոյց չարի, որ է անասնեղէն մասն, զոր և մեք ոչ ի ժամ գլորման, կամ ի սուգ և ի տրտմութիւն, այլ ի կամս տեսուն ամբացեալք, և կարող զօրութեամբ նորա, և պատճառ կոչման ուրախութիւն երկնաւոր, և տօն ցնծութեան ի հարսանիս Աստուծոյ ծնեալ դստեր Աիոնի, յորմէ յուլացեալք կամօք պատճառեցիք ոմն զագարակ իւր, և այլ ոմն

զվաճառ իւր ¹⁾ և այլ ոմանք գան հարին զհրամանս մեր անուեստ
առնելովն:

Իսկ այժմ աստանօր զինչ գործ առ ի մէնջ առանց մեղանաց,
թէ ոչ ներհալն առակիս առաքել յանցս ճանապարհաց, և ժո-
ղովելն զչարսն և զբարիս, հրաժարելով ի բարձրնորաց և ի
բարձրացելոց առաջի մարդկան, որպէս ի մէնջն, և այն ոչ եթէ
միով իւիք տկարութեան աղագաւ, և կամ երկօքումք երկիւ-
ղին, այլ բալանդակ ուխտիւն, որ և մայրաքաղաք անուն և թէ
քանի անդ բնակիչք պիտանիք և անպէտք, ծերք և երիտա-
սարգք, իմաստունք և անմիտք, յորոց և ոչ միոյ ումեք չեղաք
արժանի, այլ իբրեւ զանպէտք սեք սարաւորի թագաւորին յա-
նուն հոգացեալ եղաք:

Իսկ յաղագս որ Հռոմոց էր բանին ի իրատականս ձեր ծան-
եաք հրաժարեալ ի նոցանէ գրով և քննութեամբ, իբրեւ ի թա-
քուն աղանդաւորաց, բաւական ունել զհարցն աւանդ. և այսմ
շնորհ ունիմք իբրեւ հօր հոգւորի և պատճառի բարիօք գոլոյ,
քայց և զիմս յուշ առնեմ ես՝ զի յինէն ոչ սակաւ գիմամարտ
գտայ, երբ յիս մնաց բանն, տարակոյս շատ կալայ ելս իրացն
զյանկ հանելն անկարելի գոյ, և զի բաց թողուին տգիտաբար
խոտելի, զի առ նոսա ճանաչէր հաստատ գրով և անգիր, և առ
այս առաւել վարանէի մօտք, քան յամենայն հոգս մարմնականս
և հոգեկանս, և ի բազում հայթայթանս մօի ի նոսա թողուլ
զպատճառն և սիրով հրաժարել. պնդեցաք ի խնդիրս աւանդու-
թեանցն և լուծին յետս չոգան, և ասացին ընդ մեզ առնել զա-
մենայն, եթէ իցէ ինչ ի շահ օգտութեան: Խնդրեցաք քաղաք և
գաւառ՝ տեղի անդորրութեան և խաղաղութեան սրբոյ աթո-
ռոյս, և կապ մարմնական սիրոյ ազգիս զմեծն Տարսոն, և յանձն
առին յուսով՝ խոստացաք յանդիմանել զառ ի նոսա եկամուտ
չարին ուղղել կանոնաւ. և խոստացան ընդունել իբրեւ ի սրբոց,
և յայն սակս ածաք իբր զի եղբայրական սիրով ամենայնիւ ըզ-
խաղաղութիւն խնդրեցին իբրեւ տարամերժեալք և զրպարտեալք
ի միմեանց, և նոցայն խնդիր առ ի մէնջ յատուկ այս. զի յեր-

1) Մատթ. ԻԲ, 5.

կուց բնութեանցն միաւորութիւն, մի ունիցիմք շփոթումն և կամ պակասութիւն յատկութեանց կրիցն անգոսնելեաց, և կամ թէ որպէս եկին առ միմեանս անճառ միաւորութեամբ, և զյատկութիւնսն ոչ կորուսին:

Այդ առ այս խոստովանելի է զի տկարացաք մեք, վասն զի ի մերոց ոմանց չկարացաք ինչ առ այս դնել բանս ճշմարիտ վրկայութեամբ, զի զկայ առցէ նոցայոցն, ոչ համարձակեցաք յա ն ասէ, ի Գրիգորեանցն, և ի Բարսղէ, ի Կիւրղէ, ի Յոհաննէ և յայլոցն, զի այսորիկ նոցա են, և ի նոցանէ ոչ խոտեցան, այլ կատարեալ կան ի նոսա անխզելի կապիւք, և թէ ասեմ և թէ այլ ինչ է որ ի նոցա պէտս խօսեցան և այլ ինչ է՝ որ ի պէտս մեր անմարթ է երկու գոլով մեր և հակառակք միմեանց, ապա ոչ են խաղաղութեան վարդապետք սոքա, այլ խռովութեան. քաւ և մի լիցի, զի այս չարին է մասն. և սոքա սուրբք և Հոգով լցեալք, և առ ի նմանէ առեալք և խօսեցեալք, և առ ի սոցանէ պատուեալք և պաշտեցեալք հաւատար Աստուծոյ: Իսկ առ ի նոցանէ խոտեցելոցն և բաժանեցելոցն հակառակութեամբ, Արիոսի՝ Մակեդոնի, Պողոսի Շամշտացոյ, Նեստորի, Եւտիքի Կիւլիկեցոյ, և այլոց անիծելոցն, եթէ գոյին առ մեզ անճաճ էր ի կիր արկանել, զի չարք են. և ի բարեաց որոշեալք և զատեալք:

Իսկ որ մերք են և առ մեզ յայտնիք են և ծանօթք ինքեանք, և բանք իրեանց սրբեալք Աստուծով ի մերն ս. Լուսաւորչի և յիւրոցն, Իսահակայ և յիւրոցն, ի Մեսրոպայ և ի Դաւթէ և ի Մովսիսէ, և որք նման սոցա. որք լուար ինչ և կամ ուսաք ընդդէմ սոցա և հակառակ խօսել ինչ, և կամ առնել, և կամ յայլ հիման վերայ նորաձեւս ինչ շինել և կամ այլ ինչ աւանդեալ մեզ ընդդէմ սոցա պատուիրան, և այսու աղաճաւ ի խընդիր ելաք ձեզ, իբրեւ քաջ զինուորակցաց բերել մեզ՝ եթէ իցէ առ ձեզ հնդկային պողուատիկ սուր, և կամ ամրագոյն վահան, և կամ զբաժ հաւատոյ, և սաղաւարտ փրկութեան, զի եթէ հատ-

մանէն կտրեսցուք, և եթէ պահպանութեամբ ամրացուցուք, և զամենայն մխեալ նետս չտրացն շիջուցուք յանցանաց, իսկ եթէ եղբարք սիրեցեալք հաղորդեսցուք սիրով, և ուրախ լիցուք ի ճշմարիտ պատկերին գիւտ, զոր դարձեալ կորուսաք չարին աղագաւ հաղորդ առնելով մեզ զլերնոցն պարս, զոր և աղաչեմ դարձեալ, թէ և անձամբ ոչ՝ սակայն գրով ծանուցես մեզ, թէ զորոց ոմանց ի մերոցն աստանօր առցուք զբան անշիթութաբար մի բնութիւն ասողայն, զի դիցուք ընդդէմ սոցա և յաղթեսցուք. եթէ Գիտսկորոսի իցէ՝ ոչ հաւանիմ լիսն զի նա ոչ է ի մերայոց աստի, այլ յատուկ նոցա ճանաչի լեզուաւ, և աղգաւ, և քահանայապետութեամբ մեծի քաղաքի մայրաքաղաքացի: Նոյնպէս և Տիմոթէոս, որ յիւրայոցն Կուղ (կոչի) նորա իցէ զարմի և քուերորդի, և թէ այս Պետրոս, որ ի նոցանէ Կայլ կոչի, և առ մեզ աստուածատես. թէ յորում ժամանակի եկաց հայրապետ յԱղէքսանդրի, որոյ և առ Ակակ թուխտան, լիսն զի պարտ լարկանիմ զբազումս զայսոսիկ ընդունել և պատուել զոր յառաջ գրեցաք, և ի բանս նոյա կապեալ որք Աստուծոյ են ընտրեալք և բազմաց հաճելիք քան զսակաւքս զայսոսիկ, որք յիւրայոցն խոտորեցան և անարգեցան, լիսն զի գիտողացն է վկայութիւն ճշմարիտ, զոր և աղաչեմ կրկին, զի լուծցես զայս տարակուսանս յիմոյ, զի թէպէտ և ծեր գոլով, բայց աթենացի, մի և եթ լուծցես և զհարցումն թագաւորին ի հարցողաց տկարութեամբ, այլ միայն թէ ծեր եմ յԱթէնս և եթէ տեսանես զիս մոլորեալ՝ զիս և զիմքս, եռա հոգով՝ ըստ Պօղոսի,¹ և եթէ գոանես գիր զանճանօթն Աստուծոյ, մի թագուցաներ, այլ հրատարակեա ելեալ ի բարձր դիտանոցի, ըստ սերմնաքաղին, թէ և բանդ հասանէ և գանք, զի այժմ աթենացիք եմք ամենեքեան, և ոչ այլ ինչ պարապեմք, բայց միայն ասել ինչ և կամ լսել նորագոյնս² և աստուածախոյելուչս:

Եթէ որդի ես Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի,³ վարդապետեա ի վայրարնակ տանս. աստուածալաճառ եթէ գտանիցիմք ի բաց վարեա, եթէ Գամալիէլ իցես,⁴ ալեօք իմաստու-

1. Հռ. ԺԲ, 11. 2. Գործք. առ. ԺԷ, 18—21. 3. Հռ. Ը, 17. 4. Գործք. Ե, 34.

Թեան պայծառացեալ պատուական օրէնուեոյց լեր ժողովրդէան։ Ասան համարձակ, եթէ յԱստուծոյ իցէ հաճելի բանդ զկայ առցէ կատարմամբ, ապա թէ՛ քակտեսցի, այլ զի գրեցէք դարձեալ, պի թէ հարկ լինի Որդւոյն Աստուծոյ վերստին խաչել, և հայրականն բարբառ երևել դարձեալ, ընդ նոսին և հոգւոյն յայտնութիւն, ի Հայոց եկեղեցիքս նորաձև ինչ այլ ոչ լիցի, և առ այս դարմանք կալան զմեզ հիացմամբ, թէ ո՞ր իցեն նորաձևքն մի՞թէ ոչ ընթեռնումք յարաժամ զաստուածախօս պատգամս, յեկեղեցիս մեր, մի՞թէ ոչ յայանապէս ձայնէ աւետարանիչն սուրբն Յովհաննէս թէ «Հայր իմ մեծ է քան զիս», բայց այժմ անձն իմ «խռովեալ է», և եթէ «Հայր եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն», բայց ոչ իմ կամք, այլ քոյդ եղիցին», և թէ «հոգիս յօժար է, բայց մարմինս տկար», և թէ «եւանեմառ Աստուած իմ և Աստուած ձեր» 1։

Արդ՝ խնդրեմ առ ի քէն, հայր ծերունի, յայտնել մեզ սիրով, թէ ո՞ր բնութիւն կրտսեր է, քան զՀայր, և թէ յո՞ր բնութիւն Որդոյ ածեալ եղև խռովութիւն և կամ թէ յու՞մմէ՞ աղօթէր անցանել բաժակին, և կամ ո՞ր բնութեան կամք Որդւոյ ոչ հաւասար էր Հօր, և թէ զո՞ր բնութիւն կոչէր մարմին տկար, և կամ ո՞ր բնութեան Որդւոյ իցէր Աստուած Հայր, աղաչեմ կրկին՝ առնել զիս խելամուտ, զի և մեք ընդդէմ՝ երկաբնակացն մարտ եղեալ կռուեսցուք՝ և մի յաղթահարեսցուք։ Այսու դարձեալ քննելի է մեզ՝ թէ առաջինն զի՞նչ եղև խոնարհել Տեառն, և կամ թէ որով երեր զմերս նմանութիւն, և ի ծառայի կերպարան գրտաւ, և կամ թէ յոր սակս խաչեցաւ, և խաղաղութեան թագաւոր կոչեցաւ Տէրն, 2 եթէ խռովութեան, կարծեմ թէ աստանօր լցաւ մարգարէութիւն Տեառն, եթէ «եկի քակել զայր ի մօրէ, և թշնամիք առն ընտանիք իւր», 3 եթէ այդպէս իցէ՝ ապա աւաղ թշուառութեանս, իսկ ոչ այսպէս իմացաք զՔրիստոս, այլ խաղաղութեան գոլ թագաւոր, և սիրով խոնարհեալ ի մերս,

1. Յով. ԺԲ, 27. 2. Ղուկ. ԻԲ, 42. Յով. Ի, 17. 3. Փիլիպ. Բ, 7. 5. Մատթ. Ժ, 35.

վասն զի զիւրն առատապէս հեղցէ և թողցէ ի մեզ զխաղաղութիւն: Արդ՝ եթէ վասն խաղաղութեան և սիրոյ միանգամ խաչեցաւ, հարկէ և այժմ նմա վերստին խաչել և բառնալ զկրօնին, և լուծանել զխռովութիւն, և քակել ոչ զանդամս ի գլխոց, այլ զայր ի մօրէ. և առ այս ես ոչ լինիմ ըստ Թովմայի անհաւատոյ: ¹ այլ հաւատացեալ ըստ աւագակին և հարիւրապետին ². վկայեմ՝ և ըստ ճշմարիտ վկային, եթէ զառն Աստուծոյ կարող է բառնալ զմեզս ³ աներկբայ հաւատացելոցն զցորեանն շտեմարանել և զյարգն անշէջ հրով այրել: ⁴ զի նորա ոչ այլ կամք ինչ լուաք, այլ զի արասցէ զմեզ արժանի գնալ կոյմանն՝ յոր կոչեցաքն ⁵ յամենայն խոնարհութեամբ շահել յիրերաց սիրով և պահել զմիաբանութիւն փութով անդամոցս առ միմեանս և առ գլուխ խաղաղութեան յօդիւ մի մարմին և մի հոգի. որպէս և կոչեցաք, և յաղագս այսորիկ եղ առ ի մէնջ զոմանս առաքեալս, զոմանս հովիւս և վարդապետս, ⁶ զի արիաւսնս լիցուք ի գործ պաշտամանն, և մի հարկ արասցուք վերստին խաչելոյ Որդոյն Աստուծոյ, այլ զի կացուցուք զամենեւեան այր կատարեալ ի չափ կատարմանն Քրիստոսի. ⁷ ապա եթէ ոչ հիմն ճշմարիտ սիրող և խաղաղարար վստահացեալ գիտեմք՝ եթէ մարդասէր է բնութեամբ և թէ առնեմք հարկ խաչի վերստին, այլ զի օժանդակ եղէք մեզ բանիւ ի խրատականս գիր, թողուլ և լքանել ի բաց զայս իր, զի ոչ տէրն Ներսէս և ոչ հրեշտակք յերկնից կարող էին զայս բան յաւարտ հանել, այլ զի մի անհամեսցիմ աղս. առ որս զայս պնդութիւն հաւատոյ ամենայնի փոխան ստացան, և այսու աղագաւ փոխարինաց արժանի վարկաք զմեզ ի Քրիստոսէ, և խորանին լուսոյ ժառանգորդք, և առ այս մեծապէս ունիմք շնորհ՝ որպէս և ճշմարիտ Հօր և վարդապետ, զի ի բարւոքն առաջնորդէք մեզ ճանապարհ, զոր կարծեմ եթէ ճշմարիտ վերահասու եղեալ իցէ ձեր անբարեսէր ազգիս խռովասէր լինելոյն, աղքատ բանիւ և ամբարտաւան

1. Յով. Ի, 25. 2. Ղուկ. ԻԳ, 42, 47. 3. Յով. Ա, 29.
4. Մատ. ԺԳ, 30. 5. Եփես. Դ, 1. 6. Անդ 11. 7. Անդ, 13.

մոօք՝ զոր թէ այս այսպէս իցէ, ապա աշխարելի և ողորմելի համարիմք զանձինս, զի լուաք յիմաստնոյն. զոէր ամբարտաւանից հակառակ գոյ՝ և զոգէտն անհաւատ կոչեաց Պօղոս. զոր և աղաչեմ գարձեալ կամ յայտնել զմերս ճշմարտութիւն անթերի, որպէս և գրեցաք վերոյ, թէ ուստի՞ և յորո՞ց. յետոյ ծանեաք և առաք, զի յայնոցիկ հաւատարմացուք. ապա թէ ոչ՝ զոգիտաբար աւանդութիւն պարտիմք ի բաց խղել զկապ, ոչ իբրև յօտարաց օգտել, այլ ի մերոց իսկ գանձարանից աստուածաշունչ գրոց, և այնու վարձուց արժանաւորիլ, և երամից սրբոց խառնուրդ գտանիլ ի Քրիստոս Յիսուս:

Ծանեաք ի գրելոյս, և զորս յազագս եկեղեցւոյ սրբոյ շնորհակալութիւն էիք յիշեալ մերոյս ջանի և աշխատութեան, եթէ զերծուցեր զմեզ ի Սիտեռայ և յօժարութիւն կամաց զգատարումն էառ և լուծաւ, և սնտոի և ընդունայն համարիմք զմեր ամենայն երկունք և զաշխատութիւն և զջան: և լուեալ դադարիմ՝ իբրև զվճացեալ և զմտաւ ածեմ յոգւոց հանելոյ, եթէ զուր և նանիր վաստակեցի, քանզի սեղանաւորքն և ուրախակիցքն պակասեցին, և գովողքն ըստ արժանաւորութեան լուեալ դադարեցին և ոչ եկին յառաջ. առ որ կարծէ թէ զիս անարժան վարկաւ, ընդունողն ըստ Եսայեայ, Դաւթի և Երեմիայ:

Դարձեալ ընթերցաք և որ յազագս աւետարանական էր բանն, զի ոչ ելից զփափաքն ձեր չնչին, և անպէտ մաշկալաթերովն, զոր դարձեալ այսրէն դարձուցիք, և մեք ընկալաք և շնորհ մատուցաք իբրև առ ի ձէնջ պարգևեալ, զի առ այդ չեմք անխոնարհ, այլ լաւ համարիմք զմին մաշկալաթ գրոյ, քան զգանձ լի ամանով: Իսկ յազագս այնոցիկ զայս ինչ ծանիցեն ճշմարիտ բան, յառաջին գիրն այսպէս ծանեաք գրեալ թէ զկողմանն սր տեառն հրամանաւ գրեցաւ, և կամ զոր ի Մօրոյ քեզ բերին: Եւ զայն որ ի տեառն յիշատակ գրեցաք, անձա՜հ էր զձեռնամուխ լինել և հեռացուցանել յաթոռս սրբոյ ուխտի աղագաւ, և կամ ի պէտս անձին, զի նա զայն իւր գանձ անկողոպտելի

ստացաւ և գրով ձեռին իւրոյ կնքեաց: Եւ Մարեցին այլ նուազ և այլ փոքր և չնչին, և չէր ի միջի, և մեք այնր փոխան չհամարձակեցաք գաւազան՝ չեմք լսել ոչ բանիւ և ոչ ի գրոյ, և յիմ անունն կողռանն չկայ գիր և ոչ մի. սկսաւ հայ. այլ ի կատարումն ոչ էած, այլ գնաց և մեք այլ չհոգացաք, այլ քանզի և մեք ետուք համարձակութիւն առ ի ձէնջ խնդրել թէ ունիցիմք պէտս, և այսմ առաւել գոհութեամբ շնորհ ունիմ, վասն զի չունիմ այլ ինչ ցանկութիւն սրտի, բայց թէ զաստուածային գրեանս ժողովելոյ, թէ և ոչ բանիւ կամ գործով: Արդ եթէ գտանի առ ձեզ Դիոնէսիոս գիրք կամ բնութեան կամ կազմութեան, կամ զ, օրէիցն, կամ փիլոն նախախնամութեան՝ առաքեսցես ի յիշատակ ծերոյ հօրդ, վասն զի փափաքելի է ինձ. և զայլ ամենայն հասկանալ ունիք ի մեր պատուական սրբասնունդ աշակերտէդ Գրիգորիսէ, և յիշխանէդ Կոստանդնէ. և դուք ողջ լեւուք տերամբ:

(Կը շարունակուի)

Ա. ՏԵՐ ՄԻՔԵԼԵԱՆ.